

բարձրագոյն հրամանատար յամալքային և ծովային զինուորութեանց :

Նախագահը բացասական քուէի մը իշխանութիւն ունի՝ ընդդէմ ամենայն օրինաց Համաժողովոյն, բաց յանոնց՝ որք անդամոց երկու երրորդին մեծածախնութեամբ քուէարկեալ են : Ըստ կամե կրնայ ընտրել կամ նորոգել իւր պաշտօնատան անդամները, որք պարզապէս տնտեսական պաշտօնեայք են, և ոչ երբէք կը մասնակցին խորհրդարանի կամ ծերակուտի նիստերուն : Նախագահին պաշտօնական կեդրոնավայրն է՝ ի Ռուշինկըն Սպիտակ Տուն կոչուած ապարանքը, և տարեկան 250, 000 ֆռ. թողակ կ'ընդունի :

Համաժողովը և Նախագահը ընդհանուր դաշնակցութեան խընդրովք կ'ըբաղին : Իսկ իւրաքանչիւր գաւառաց մասնական գործօքերը՝ մասնական կառավարութիւնք կը կարգադրեն : ամէն գաւառ առանձին ներկայացուցաց խորհրդարան մը, ծերակոյտ մը, կառավարիչ մը, դատաստանարան և առանձին զինուորութիւն մ'ունի, և բացարձակապէս անկախ է իւր մասնական գործառնութեանց չըջանակին մէջ :

Շարունակելի

ՌԱՄԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԴԱՄԱՆԴԻ

Կրէնթ Սլէն նշանաւոր բնապատմագէտ և մատենագիր, կը պատմէ որ մի անգամ երբ ինքը քանի մը օտարականաց հետ կը ճանապարհորդէր Նեղոս գետին վրայ՝ ամերիկուհի մը յանկարծակի ձեռնոցները հանեց : Իւր սպիտակ փղբրիկ ձեռքերուն վրայ տաա տասուերկուքի չափ աղամանդեր կը փայլէին : Կրէնթ Սլէն զայս տեսնելով՝ զարմացաւ, և այս առթիւ քանի մը խորհրդածութիւններ կ'ընէ այն կերպին վրայ՝ որով իւրաքանչիւր որ պէտք է ըմբռնէ հարստութեան գործածութիւնը՝ բաղդատմամբ ընկերութեան մէջ ունեցած իւր պարտուց կամ դասակարգին :

Նախ և առաջ ինքը կը հաստատէ որ աղամանդները ըստ ինքեան ամենեւին արժէք մը չունին : Այս պարագային յարմար պատահութիւն մը կը պատմուի Լոնտրայի 1862 ին աշխարհահանդիսէն, որ եթէ ճիշդ ալ չէ՝ սակայն շատ գիւտաւոր է և յարմար հեղինակին գաղափարին : « Ինչպէս ամէնքը կը յիշեն՝ գոնիկոնր աղա մանդը այն աշխարհահանդիսին մէջ՝ ի ցոյց դրուեցաւ բիւրեղեայ փեղկի մը մէջ, և յանձնուեցաւ ոստիկանութեան արթուն հսկողութեան : Ժողովուրդը մի առ մի ընդունուեցաւ՝ որպէս զի իր անյազ աչաց փափագը յազեցնէ այն փայլուն քարին շողերէն :

Այնքաւ բազմութիւն ժողովրդեան ամէն օր առաւօտունէ մինչեւ երեկոյ կանգ կ'առնուր այս ապակափեղկին առջև՝ զարմանալով և հրաշանալով այս գոհարին չքեղ փայլին և գեղեցիկ պայծառութեան վրայ - « Ո՛հ, որչափ գեղեցիկ է, որքան փափուկ, և գիտէ ինչ արժեք է, ինչպէս կը տարբերի կեղծ գոհարներէն, ինչպէս կը փայլի և կը շողայ » :

Սակայն ոստիկանութեան պաշտօնեայք լսեցին որ օր մը առաջակաց խումբ մը դիտաւորութիւն ունէր յարձըկելու գոհիտուրի վրայ, և զայն գողնալէն վերջը պիտի փակէր՝ ոստիկանութեան խուզարկութիւններէն ազատելու համար, վախնալով որ չըլլայ թէ յանկարծ այն անդին գանձը ձեռքէ փախցնեն, և փափազելով միանգամայն այս յանդուգն աւազակաց խումբը բռնելու, ոստիկանապետը և խաղաղութեան պաշտօնեայք այն փայլուն և թանկագին ածխոյ կտորին տեղ՝ ճիշդ նման մեծութեամբ և ձևով աւրուեստական բիւրեղ մը գրին, բնականաբար ոչ ոք 'ի ժողովրդ, զենէ իմացաւ այս հանդիպած փոփոխութիւնը . և խումբ խումբ այցելութեւ իրենց բարի հաւատոց վրայ հաստատեալ՝ նմանապէս կ'ազազակէին « Ո՛հ, ինչ գեղեցիկ է, արդեօք որչափ կրնայ արժեք, ինչպէս կը փայլի, յիշաւի կը կուրացնէ » և այլ ասոնց նման բազմաթիւ բացազանչութիւններ, և գոհ և երջանիկ տուն կը դառնային՝ մտքերնին գնելով որ անսման և եղական բան մը տեսան :

Յայտնի է թէ ադամանդք և այլ գոհարներ սկզբնաբար յարգ ստացան իրենց փայլունութեան համար . իսկ այժմ միայն սակաւագիւտ ըլլալուն մէջն է իրենց արժէքը, ուստի և հետեալաբար այնքան դժուարին և ծանրագին զանոնք ստանալն :

Ամենակարեւոր կէտ մ'է այս, եթէ աւսումնասիրենք հին աշխարհի և նոր աշխարհի տնտեսական տարբերութիւնը, և նոյն իսկ ընկերական և հակա + ընկերական գաղափարին, Գաղաքականութեան բովանդակ յառաջագիւծութիւնը՝ եթէ նկատենք զայն տնտեսագիտութեան տեսակէտով, կը կայանայ հնոց բնական և բազմաձախ նիւթոց տեղ փոխանակել նորագիւտ և շինծու նիւթեր :

Հին ժամանակը՝ որ միայն բնութեան դիպուածական արդիւնք կամ բերքը գտնելու կը գործածուէր, այժմ՝ լաւագոյն ևս կը գործածուի արուեստով և ճարտարութեամբ գեղեցկացնելու ամենէն աւելի հասարակ և գիւրագին կոչու նիւթերը :

Այս կարեւոր յեղափոխութիւնս՝ կապակցեալ է 'ի գերութենէ յազատութիւն վերածող ընկերական մեծամեծ յեղափոխութեանց հետ . ադամանդի և այլ գոհարեղինաց և ազնիւ նիւթոց տէրը՝ բքնական ախորժ և փափագ մ'է գերեաց տիրոջ մը գաղափարին :

խակ արուեստական, պարզ և գեղեցիկ գործոց սերը՝ որոց յարգը ոչ եթէ նիւթոյն հազուադիւս ըլլալուն վրայ կայացեր է, այլ ճարտարութեան և աշխատանաց, այս հաշակը՝ միայն ազատութեան և գեղեցկութեան գաղափարին հետ կրնայ միանալ, միով բանիւ՝ ընկերական գաղափարին։ Միոյն միտքը և ախորժը բարբարոս է և անկիրթ, իսկ միւսոյն զարգացեալ և կրթեալ՝ մին յանչափս շահասէր է և անձնասէր, իսկ միւսը հաղորդական և այլոց բարեացակամ։

Գրամները ծախելու քաղաքական կերպն է՝ գործածել զանոնք այնպիսի նպատակներու՝ որք գործնականապէս ընկերական ըլլան և կամ գէթ բոլորովին հակաընկերական չըլլան։ Ճշմարիտ քաղաքակրթեայ անձը որ բարոյական ազնուական զգացմունքներ ունի սրտին մէջ՝ պէտք է ջանայ ինչիկներ զարգաբերել ոչ եթէ գունատ և անպակինք հազուադիւս բնական նմանութեամբ, այլ արուեստական և ճարտար գործերով՝ որոց մէջ գործողին կողմանէ հանճար, ճարտարութիւն, հաշիւ և գիւտ տեսնուին։ պէտք է զմայլի, քաջաբերէ նորածէ և այլ և այլ գեղեցիկ նկարիւք և գոյներով զարդարուած յախճապակեայ անոթ գործողները, համբերութեամբ չինուած գեղեցկանկար կապերաները, ամենաճարտար մետաքսեայ գործածները, ճարտարութեամբ աշխատուած մետաղները և այլն։ Մեծագոյն սիրով պէտք է յարգէ արուեստական մեծամեծ գործերը, նկարը, արձանը, գեղեցիկ շէնքեր, բանաստեղծութիւն, երաժշտութիւն, ողբերգութիւն։

Իւր ուրախ նա բարոյականութեան բարձրագոյն աստիճանը գիտէ՝ այսինքն կատարեալ և կրթեալ մարդուն վերջին տգործայն՝ ոչ երբէք պիտի փոփոգի արուեստական մեծագործ իր մը՝ միայն իր և բարեկամաց վայելից գործածել։ Եթէ իր ընկերական վիճակին մէջ բազդը ներք իրեն գեղեցիկ արձան մը կամ պատկեր մը տեսնալու՝ ինքզինքը պէտք է պարզ առժամանակեայ տառադապահ մը համարի առ բովանդակ ընկերութիւնն, և նորա վայելից համար պէտք է գործածէ դայն, ըստ խօսից մեծիմաստ հաղորդացւոյ մը թէ « Արուեստական գլուխ գործոցները ոչ գին ունին և ոչ տէր »։

Բնութիւնը կարծես ամբողջ զանգեալ է մի, նոյն իսկ բարոյական տեսակէտով, այնպէս որ բարբարոսները՝ բարբարոս են յայնմ նայնի և վասն ամենեցուն, միշտ անհասկացող քաղաքականացողը՝ նոյն իսկ իրենք կը ծնանին զքաղաքականութիւն։ Ոսկի կամ աղամանդ փորել հանելը, մարգարիտ որսալը, ջայլամ սնուցանելը, փողակի որսորդութիւնը՝ բնութիւնը չեն ազնուացներ և ոչ իսկ կը փոփոխեն, այլ ընդհակառակն բարբարոս և

մարդուս բնութիւնը նաւաստացնող զբաղմունքներն են, յորոց շատը բազում անգթութեամբք, վտանգօք և յանդգնութեամբ միայն 'ի գործ կրնան դուրսիլ. իսկ ընդհակառակն քաղաքական արուեստք՝ այս դժուարութիւնները չունին, և որոց արգասիք կարգաւորեալ անձանց առջև շատ աւելի յարգ ունին քան թէ քարի կտոր մը կամ հաւու փետուր մը:

Գծագրողը, փորագրողը, մանրանկարիչը, մետաղագործը, ափսոսաբարձը, ամէնքն ալ կ'աշխատին այնպիսի արուեստից վրայ՝ որ ինքն ինքեան կը կրթեն և կ'ազնուացընեն դձեռս, զաչս և զուղեղն իսկ գլխովին, թէ՛ արուեստաւորին և թէ՛ իրեն գործերը գործածողին. հաճախեալ կը կոչուին քաղաքականացեալ և քաղաքականացնող արուեստք և զբաղանք. իր էութեան մէջ կը բարձրացնեն զմարդ և կը լուսաւորեն, թէ՛ ընկերական և թէ՛ քաղաքական մեծագոյն արդիւնք և արգասիք յառաջ կը բերեն. նախախշատակեալ զբաղանք և գործողութիւնք կը նաւաստացնեն ըզմարդ մինչ ի վայրենութիւն և ի վայրագութիւն, իսկ վերջինքս ընդ հակառակն զմարդ կը կրթեն և խոհուն կ'ընեն:

Պէտք է դիտել նաև որ բարբարոսական կամ յետամնաց ճաշակք՝ կը քաջալերեն յորտորութիւն, 'ի պատերազմ, 'ի յափշտակութիւն, 'ի զինուորութիւն. մինչդեռ քաղաքականացեալ միտք և ճաշակ՝ կը քաջալերեն 'ի յարատև զբաղանս, 'ի խաղաղութիւն, ի ճարտարագործութիւն, յընկերութիւն. Այն անձը որ աղամաղներ և սամիյրներ գնելու զբաղած է՝ հաւասար և ընկեր է մարդկային յառաջագիմութեան թշնամեաց հետ. իսկ այն անձը որ ճարտարութեան և արուեստից առարկայներով կ'զբաղի՝ նա բարեկամ է մարդկային ընկերութեան և այն սակաւաթիւ անձանց՝ որք կ'աշխատին 'ի յաղթութիւն քրիստոնէական մեծամեծ և բարձր սկզբանց:

Կը յուսանք, թէ այսու ընթերցողք ըստ բաւականի իմացան թէ ինչ են մեր դժուարութիւնքն ընդդէմ ազամանդից և գոհարեղինաց. մեր առարկութիւնը հաստատեալ է բարոյական խորին և ամենակարեւոր սկզբանց վրայ:

Արդար և ուղիղ մարդը՝ կենաց ամէն քայլաքոխին պէտք է կանգ առնու և ինքն իրեն հարցնէ. « Իմ այս գործս, ինչ հետեանք պիտի ունենայ մարդկային յառաջագիմութեան և ազատութեան վրայ »: Պէտք է նա բոլոր իւր գործերը կարգադրէ բարոյական, ընկերական և քաղաքական ինչ ինչ սկզբամբ, որոնք հիմնեալ են մարդկային պարտուց ճշմարիտ և խորին ճանաչողութեան վրայ: